

ՄՀԵՐ ՎԱՍԻԼՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության
իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրոս,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի հայցորդ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հոդվածում հանգամանորեն քննարկվում են պետությունների պատմական տիպերի և ժամանակա-
կից տիպաբանության հիմնական մոտեցումները:

*Հիմնաբառեր- պատմական, պետություն, պետականության զարգացում, տիպաբանության ժամա-
նակակից տեսություններ:*

Պետականության դրսևորման ձևերի բազմազա-
նությունը հանդիսանում է արդի տեսական-իրա-
վական հետազոտումների ամենաբարդ հիմնախն-
դիրներից մեկը: Տվյալ հարցի արդիականությունը
ավելի են կարևորում բևեռային երկու երևույթները:
Մի կողմից գրանցվում է միտում՝ վերազգային կա-
ռույցների ստեղծման ճանապարհով որոշակիորեն
ստանդարտացնել պետությունների տիպաբանու-
թյունը: Մյուս կողմից պետական կազմությունների
ակնհայտ բազմազանությունը տարբեր երկրնե-
րում նախորոշում է պետությունների տիպերի և
ձևերի դասակարգման անհրաժեշտությունը:

Պետության բնույթի և էության բացահայտու-
մը պայմանավորում է դրա տիպաբանությունը, ին-
չը հնարավորություն է տալիս տեսականորեն պար-
զաբանել դրա սոցիալ-որակական բնութագրերը և
խորքային հատկությունները: Հասկանալի է, որ
պատմական գործընթացի բնույթի, դրա նախահիմ-
քի պետականության էվոլյուցիայի կոնկրետ պատ-
ճառների և օրենքների վերաբերյալ հայացքների
զարգացմանը զուգընթաց առաջ են քաշվել բազմա-
թիվ հայեցակարգեր: Պետության տիպերի և ձևերի
հիմնահարցերի ավանդական դարձած հասարա-
կական-տնտեսական ֆորմացիոն մեկնաբանման
հետ մեկտեղ ծլարձակեցին նաև արևմտյան հետա-
զոտողների հայեցակարգերի շնորհիվ «պատ-
րաստված» բազմաթիվ տեսություններ: Այդպիսի
բազմազույն ներկայանակը հանդիսացավ արդի
հետխորհրդային իրավագիտության զարգացման
բնական շարունակություն, քանի որ ոչ վաղ անց-
յալում տվյալ հիմնահարցի վերլուծման վերաբեր-
յալ մոտեցումների բազմակիության հարցը չէր էլ
կարող առաջ քաշվել:

Պետության տիպաբանության հետ կապված
հիմնախնդրի հետագա մշակման արդիականու-
թյունը կանխորոշված է Հայաստանի հասարակա-
կան-քաղաքական զարգացման ժամանակակից

միտումներով: Վերջին ժամանակներս ավելի ու
ավելի հաճախ կարելի է լսել ժամանակակից պե-
տականության ճգնաժամի դեպի ավելի կայուն
ձևերին վերադարձի մասին: Դրա հետ մեկտեղ պե-
տության տիպաբանության հիմնահարցերի հետա-
գա վերլուծությունների անհրաժեշտությունը պայ-
մանավորվում է ևս մեկ հանգամանքով: Մենք նկա-
տի ունենք այն գործընթացը, որը կապված է պե-
տական-իրավական մակարդակով ազգային պե-
տականության զարգացման հետ:

«Պետության տիպ» հասկացության վերլուծ-
ման ընթացքում անխուսափելիորեն ծագում է նաև
դրա բաղադրամասերի ստուգաբանական էության
բացահայտման անհրաժեշտությունը: Բնական է,
որ այդ ընթացքում նպատակահարմար է ներկայա-
նում նորից վերադառնալ «պետություն» հասկա-
ցությանը՝ կենտրոնացնելով ուշադրությունը դրա
բովանդակության և գործառնության բնութագրերի
վրա: Այս իմաստով մոտ, սակայն ոչ նույնական են
պետության «տիպը» («տեսակը») և «ձևը»:

Հանդիսանալով գույզ կատեգորիաներ՝ գրա-
կանության մեջ դրանք մատուցվում են այնպես, որ
նրանց անջատ գոյությունն անհնարին է: Հայտնի
իմաստով տրամաբանական է դնել այդ գույզ կա-
տեգորիաների փոխնեգործության հարցը: Մեր
կարծիքով, իրենց փոխնեգործությամբ դրանք
առավել ամբողջական ու օբյեկտիվ ձևով են ար-
տահայտում պետականության կայացման ու զար-
գացման ողջ գործընթացը: Սոցիալ-քաղաքական
գործընթացի ժամանակակից միտումների վերլու-
ծությունը հանգեցնում է նոր հայեցակարգերի
մշակման անհրաժեշտության: Առավել տարածում
են ստացել այն տեսությունները, որոնք 20-րդ դա-
րավերջի հիմնախնդիրները դիտարկում են քաղա-
քակրթական մոտեցման առաջնայնության տեսա-
կետից: Գիտնականների զգալի մեծամասնությու-
նը հռետեստորեն է մոտենում պետության ապագա

www.journal.lawinstitute.am

զարգացման հեռանկարների հետ կապված հարցերին² : Ենթադրվում է, որ գերիշխող գործոն է հանդիսանում որոշակի մշակույթի, քաղաքակրթության առկայությունը: Այս իմաստով պետականագիտական մոտեցումը «թաղված» մնաց ավանդական հայացքների փլատակների տակ, որոնց թվում ոչ պակաս կարևոր դեր էր խաղում մարքս-լենինյան հայեցակարգը: Մեր կարծիքով, մնան երևույթը կարող է բերել տեսական մեկ դպրոցի մենաշնորհային տիրապետման, ինչը բնորոշ էր ոչ այնքան վաղ անցյալին ևս:

Պետության և հասարակության տիպաբանության, դասակարգման, էության բնորոշման, ձևը և գործառնական նշանակության հարցերը եղել և մնում են առանցքային պետության և իրավունքի ընդհանուր տեսության համար:

Մեթոդաբանական նշանակություն ունեցող այս հիմնարար թեմատիկային իրենց աշխատություններն են նվիրել Ն.Գ. Ալեքսանդրովը, Ս.Ս. Ալեքսեևը, Ֆ.Մ. Բուրյացկին, Ա.Մ. Վասիլևը, Ա.Բ. Վենգերովը, Գ.Բ. Գալպերինը, Վ. Ե. Գուլիևը, Վ. Գ. Գրավսկին, Ն.Ն. Դեևը, Ա.Ի. Դենիսովը, Վ.Դ. Չորկինը, Ի.Պ. Իլյինսկին, Ա.Ա. Կոնենսովը, Ա.Ե. Կոզլովը, Ա.Ի. Կորոլյովը, Օ.Ե. Կուտաֆինը, Վ.Վ. Լազարևը, Ռ.Ջ. Լիվշիցը, Լ.Ս. Մամուտը, Գ.Ն. Մանովը, Մ.Ն. Մարչենկոն, Վ.Ս. Ներսիսյանը, Վ.Ս. Պետրովը, Գ.Խ. Շահնազարովը, Յ.Ս. Յավիչը և այլք³:

Հասարակության, անհատի, պետության և իրավունքի փոխհարաբերություններին նվիրված հարցերի հետազոտման գործում մեծ ավանդ ունեն մաս արևմտյան նշանավոր շատ հետազոտողներ:

Հասարակության կյանքում, ինչպես ընդհանրապես համաշխարհային պատմության, այնպես էլ կոնկրետ ռուսաստանյան պետականության դերին և տեղին իրենց աշխատություններն են նվիրել 19-րդ և 20-րդ դարի ռուս ականավոր գիտնականներ Ն.Ն. Ալեքսեևը, Մ.Ա. Բակունինը, Ն.Ա. Բերդյաևը, Ա.Գ. Գրադովսկին, Վ.Մ. Գեսսենը, Ի.Ա. Իլյինը, Լ.Պ. Կրասավինը, Ն.Մ. Կորկունովը, Պ.Ա. Կրոպոտկինը, Ս.Ս. Կոտլյարովսկին, Ս.Ա. Մուրումցևը, Գ.Վ. Պլեխանովը, Կ.Պ. Պոբեդոնոսցևը, Վ.Վ. Ռոզանովը, Վ.Վ. Սոլովյովը, Մ.Մ. Սպերանսկին, Ե.Ն. Տրուբեցկոյը, Պ.Յա. Չապաևը, Բ.Ն. Չիչերինը, Գ.Ֆ. Շերշենևիչը և ուրիշներ⁴:

Պետականության զարգացման, նրա ճակատագրի, անցյալի և ներկայի իմաստավորման, համաշխարհային քաղաքակրթության գործընթացում պետության դերի և նշանակության հարցերն առավել սուր կերպով ծագում են ցանկացած հասարակության համար բեկումնային ժամանակաշրջաններում, երբ պահանջ է առաջանում սոցիալական և

իրավական կառույցների արմատական բարեփոխման, երբ ծառանում է երկրի հետագա զարգացման ուղիների ընտրության խնդիրը:

Այսպիսով, սույն հարցադրումը կրում է ամեննին էլ ոչ հայեցողական, «կաթինետային» բնույթ. դրա տեսական լուծումը կարևոր նշանակություն ունի մասնաբան համար, ովքեր այսօր կանգնած են ժամանակակից պետականության բարեփոխման դեպի մոտ: Հետսոցիալիստական, ինչպես մասնաբան Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի առանձին երկրներում պետությունների այսօր տեղի ունեցող ձևափոխումները պահանջեցին վերաիմաստավորել պետության հասկացության, էության և բովանդակության ավանդական մեկնաբանությունները: Նոր պարադիգմների որոնումները ենթադրում են հավասարապես հրաժարում ինչպես դասական հայեցակարգերի գովաբանությունից, այնպես էլ դրանց հախուռն մերժումից: Ինչպես մասնաբան պահանջում է դրանց տեսական-մեթոդաբանական նախադրությունների վերլուծում, տեսականորեն նշանակալից փաստերի բացահայտում: Ժամանակակից քաղաքական իրողություններն առաջին պլան են մղել պետականության այն հայեցակարգերը, որոնցում իրագործված է հասարակության կյանքում պետության տեղի և դերի բնորոշման վարաբերյալ օրգանական մոտեցումը, երբ պետությունը դիտարկվում է հիմնականում որպես սոցիալական փոխզիջման միջոց, որպես հասարակության գործերի կառավարման և ինտեգրման մեխանիզմ:

Պետության հարաբերական ինքնուրույնության մասին դրույթը, որի հեղինակային իրավունքը պատկանում է Հեգելին և մարքսիզմի հիմնադիրներին, արդի քաղաքական-իրավական տեսության մեջ ձեռք է բերում արսիմատիկ բնույթ: Պետության հարաբերական ինքնուրույնությունը կտրուկ ուժեղանում է անցումային ժամանակաշրջանում տվյալ քաղաքակրթության քաղաքական, սոցիալ-տնտեսական, ինտելեկտուալ և հոգևոր դետերմինանտների փոփոխման ժամանակ:

Պետության ձևը այն կատեգորիաներից է, որոնց բովանդակության վերաբերյալ գիտական միջավայրում կայունացած հանրաճանաչ կարծիքներ չկան: Այդ իսկ պատճառով պետության ձևի մասին հարցը դա հարց է պետության քաղաքական ռեժիմի, կառավարման տեսակի, նրա ազգային-պետական և վարչական կառուցվածքի մասին: Պետության ձևի վերլուծումը և նրա տիպաբանության բացահայտումը հնարավոր է միայն բազմագործոն, բազմաչափ մոտեցման հիման վրա, որը հաշվի է առնում վերը նշված և տվյալ կատեգորիայի հիմքում ընկած կռվանների բազմազանությունը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Պետության ձևը քարացած չէ. այն ձևափոխվում է մի ամբողջ շարք գործոնների ազդեցության տակ: Ու թեև հնարավոր է նաև հետընթաց շարժում, ավելի հաճախ տեղի է ունենում էվոլյուցիոն զարգացում: Հանդիսանալով հասարակության կայունության կարևորագույն պայման՝ պետության ձևի կայունությունը պայմանավորվում է ներքին և արտաքին գործոններով: Արտաքին գործոնների թվին պետք է դասել մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը, համաշխարհային հանրությանը ինտեգրվելը հանուն բնակչության առողջ միջավայի վերականգնման, էկոլոգիական անվտանգության ապահովման, ինչպես նաև մոլորակի բնակչության թվի աճը, պահանջումներին և դրանք բավարարելու անհնարինության անհամապատասխանությունը, զարգացած երկրների ազգային տնտեսությունների դերի աճը, համաշխարհային գերիշխանության համար պայքարի տնտեսական և գաղափարական ձևերի ահագնացումը, կոլեկտիվ բանականության ձևավորումը և դրա առաջատար դերի հաստատումը ողջ մարդկության ճակատագրում, նոր գաղափարախոսությունների ձևավորումը և դրանց իրագործման համար անհրաժեշտ ձևերի որոնումը: Պետության ձևերի վերափոխման ներքին գործոնների թվին կարելի է դասել տնտեսական, ազգային, սոցիալական, քաղաքական, հոգևոր պատճառները: Այս բոլոր գործոնների զուգորդումն ու հարաբերակցությունը հանգեցնում է տարբեր երկրներում պետության ձևերի էվոլյուցիոն փոփոխման գործընթացների բազմազանությանը:

Վերը նշված բոլոր գործոնները իրենց ազդեցությունն են գործում նաև ազգային պետականության վրա՝ նպաստելով պետության ձևի արագ և դինամիկ զարգացմանը և փոփոխմանը: Ձևավորված իրողությունները և նշմարվող միտումները չեն վերացնում ընդհանրապես պետության ձևի մասին հարցը: Որպես դրա զարգացման բազային կողմնորոշիչներ են դիտարկվում իշխանությունների տարանջատման և իրավական պետության հայեցակարգերը, որոնք հաստատում են մարդասիրական իդեալները պետության մեջ և հանդիսանում են անձի իրավունքների և ազատությունների ապահովման գործիք, բյուրոկրատիզմի, խմբակայնության և գերատեսչական շահերի գերադասման դեմ պայքարի միջոց:

Մեր կարծիքով, պետության անկայունությունը շատ բանով պայմանավորված է հասարակության և պետաիրավական համակարգի միջև կապերի խզմամբ: Պետության էության և բնույթի բացահայտումը պայմանավորում է նրա տիպաբանության անհրաժեշտությունը, որը հնարավորու-

թյուն է ընձեռում պարզաբանել կոնկրետ պետության սոցիալ-որակական բնութագիրը և խորքային հատկությունները, նրա զենտիկական կապը այլ՝ ինչպես ժամանակակից, այնպես էլ անցյալում գոյություն ունեցած, պետությունների հետ:

Պետության տիպաբանության վերաբերյալ մոտեցումների բազմազանությունը պայմանավորված է դրանց հիմքում ընկած կոլեկտիվների բազմազանությամբ: Դասակարգման հիմքերը պետք է հասկանալ ելային իմացաբանական կանխադրույթները, որոնց վրա հենվում է հետազոտողը:

Հետազոտվող օբյեկտների, տվյալ դեպքում պետության տիպաբանությունը բնորոշող առանցքային կատեգորիաներ են հանդիսանում «պատճառ» և «պայման» հասկացությունները: «Պատճառ» կատեգորիայի տակ ընդունված է հասկանալ այն երևույթը, որն անմիջականորեն պայմանավորում, ծնում է մեկ այլ երևույթ: Այն ենթադրում է որոշակի երևույթների խմբերի կամ համակարգի բացահայտում, որի շրջանակներում հաստատվում է պատճառային հարաբերությունը երևույթների և գործընթացների միջև: «Պայմանը», բառիս լայն իմաստով, այն բոլոր միջնորդ կամ պայմանավորող գործոններն են, որոնց թվին կարելի է դասել երևույթի իրագործման համար կարևոր, սակայն ոչ անխուսափելի երևույթն առաջացնող գործոնները, ինչպես նաև որոշակի միջավայր ստեղծող գործոնների ամբողջականությունը: Պետության ձևերի բազմազանության վրա ազդող պայմաններն ու պատճառները անհրաժեշտ է դիտարկել դրանց փոխկապվածության և փոխներգործության մեջ:

Սոցիալական երևույթների, այդ թվում նաև պետության ձևերի տիպաբանությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն ճանաչողական առումով, այլև ինչպես ընդհանրապես աշխարհում, այնպես էլ տարածաշրջաններում քաղաքական-իրավական գործընթացների և առանձին որոշումների հետևանքների կանխագուշակման համար:

Կառուցելով գերիշխման «իդեալական», «մաքուր» տեսակներ՝ Մ. Վեբերը օգտագործեց ավանդական և խարիզմատիկ պետությունների հասկացությունները սուկ որպես ելակետ պետության երրորդ տեսակի լեգալ գերիշխման վերլուծման համար: Հենց այդ լեգալ գերիշխումն էլ նա համարում էր Արևմուտքի քաղաքական առանձնահատկությունը: Լեգալ գերիշխումը իրավունքի գերիշխանությունն է այն իմաստով, որ ինչպես բուն իշխանության գոյությունը, այնպես էլ դրա գործողության ոլորտը կախված են մարդկանց կողմից սահմանված պոզիտիվ իրավունքից:

Այս առումով բավականին պատկառելի խումբ են կազմում ցիկլիկ տեսությունները հնագույնե-

րից մինչև ժամանակակից: Պլատոնի գաղափարները չորս տեսակի պետությունների մասին, որոնք հաջորդաբար փոխարինում են մեկը մյուսին, ավելի մանրամասն ու հետևողական զարգացում ստացան «պետական համակեցության շրջանառության» համակարգում և իրենց ծաղկման գագաթնակետին հասան Ջ. Վիկոյի տեսության մեջ: Նորագույն ժամանակներում հասարակության ու պետության ցիկլիկ զարգացման տեսությունը հաջորդությամբ մշակվեց Ն. Յու. Գանիլևսկու կողմից, որը գրում է մարդկության պատմության ընթացքում գոյություն ունեցած մշակութա-պատմական տիպերի (կամ քաղաքակրթությունների) մասին և պնդում է, որ անհրաժեշտ է առանձնացնել ռուսական մշակույթը նրան խորթ եվրոպական մշակույթից: Արևմտանեվրոպական գիտության մեջ ճանաչում ստացան Օ. Շպենգլերի և Ա. Թոյնբիի հայեցակարգերը: Համաձայն Թոյնբիի՝ մարդկության միասնական պատմությունը բաժանվում է առանձին, համեմատաբար ինքնամիտփ քաղաքակրթությունների, որոնցից յուրաքանչյուրը ինքնատիպ է ու առանձնահատուկ: Ուղղագիծ զարգացման մեթոդը, գործընթացների բնույթը և առանձին փուլերի տևողությունը, պարբերականությունը և կրկնողությունը բնորոշող գործոնների բացահայտումը հնարավորություն տվեց հարստացնել պատմության ցիկլիկ ռիթմիկայի պատկերը: Թոյնբիի առանձնացրած չափանիշները անթերի չեն, սակայն ակնհայտ է նրա մեթոդաբանական մոտեցման նորույթը, որը, ամեն ինչից գատ, ցույց տվեց նաև ֆորմացիոն տեսության սահմանափակությունը:

Քաղաքական-իրավական տեսության մեջ հատկապես 18-19-րդ դարերում բավականին մեծ տարածում ուներ այսպես կոչված միագիծ տեսությունը, որը խոսում էր մարդկության անդադար, անդադրում կատարելագործման, նրա ինքնակազմակերպման ձևերի առաջընթացի մասին: Դ. Տյուրգոն, Ժ. Կոնդորսեն, Օ. Կոնտը, Հ. Ապենսերը գրում էին բանականության առաջընթացի և դրան համապատասխան՝ պետականության զարգացման իրավական համակարգի կատարելագործման մասին: Ժամանակակից գիտության մեջ այդ տեսությունը իր զարգացումը գտավ Ֆ. Ֆոկույամայի՝ մարդկության գաղափարախոսական էվոլյուցիայի ավարտի և արևմտյան ազատական ժողովրդավարության՝ որպես կառավարման վերջնական ձևի ունիվերսալացման մասին գաղափարներում:

Ժողովրդավարական, ազատական այդ պետությունը հանդիսանում է մարդկության ակնթարթային առաջընթացի արդյունք և դրա ամփոփում: Նման պնդումը չափազանց վիճահարույց է և վկա-

յում է քննադատական ինքնատեֆլեքսիայի բացակայության մասին: Պետության տիպաբանության և ձևերի պատմական զարգացումը և գործողությունը բացատրող մեթոդաբանական մոտեցումների բազմազանությամբ հանդերձ, չափազանց մեծ նշանակություն ունեն երկու համակարգեր: Առաջինը դիտարկում է մարդկության զարգացումը որպես պարույրածև շարժում՝ միասնական ճանապարհ, ընդհանուր փուլեր, որոնք տարբերվում են միայն մանրամասներով: Այսինքն, զարգացման գործընթացը բաժանվում է առանձին, համեմատաբար ինքնուրույն փուլերի, որոնցից յուրաքանչյուրը կապված է նախորդի հետ: Դիալեկտիկորեն գուգորդվելով՝ շարունակականության պահպանումը և հաջորդականության հաստատումը արդյունքում բերում են ցիկլիկ շարժման, շրջապտույտի: Երկրորդ ուղղությունը կոչվում է քաղաքակրթական, քաղաքակրթությունները միանման չեն, նրանք ծնվում են և չքանում, ամեն մեկին հետևում է հաջորդը:

¹ Տի՛ս Խաբիբուլին Ա. Գ. Теоретико-методологические проблемы типологии государства. Автореферат дисс. ... доктора юрид. наук. СШБ., 1997, С. 21-22.

² Տի՛ս Ակտուալность исследования формы государства. В сб.: Проблемы конституционного развития формы государства. Уфа, 1992.

³ Տի՛ս Բայտին Մ.Ի. Государство и политическая власть. Саратов. 1972; Лившиц О.З. Государство и право в современном обществе: необходимость новых подходов // Советское государство и право. 1990, N10; Мамут Л.С. Государство: полюсы представлений // Общественные науки современность. 1994, N4, և այլն:

⁴ Միրճիսիսի տի՛ս Ս. Ս. Тип и форма государства. Ленинград, 1967.

Մեր Վասիլյան

Главный специалист отдела юридической консультации
юридического департамента администрации
Национального Собрания Республики Армения,
магистр юридического факультета ЕГУ
Соискатель института философии, социологии и права
Национальной Академии Наук Республики Армения

ՔԵԶԻՍՄԵ

Սու տիպոլոգիայի գոսուդարստեան

Վ ատիկայի օբստանտելնո րասսատրիվայույս թրօբլեմայ տիպոլոգիայի գոսուդարստեան և սօվրեմնայի սոստիպուս թո տիպոլոգիայի գոսուդարստեաննօստի.

Կլոչեվայե սլօվա: իստորիկեսկի, գոսուդարստեան, րասվիտիե գոսուդարստեաննօստի, սօվրեմնայե տեօրիայե տիպոլոգիայի.

Mher Vasilyan

Chief specialist of the Division of Legal advises of the Juridical
department of the National Assembly of the Republic of Armenia.
Master's degree of the Faculty of Law of the Yerevan State University
Applicant of the Philosophy, Sociology and Law Institute
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

Սոն տիպոլոգիայի գոսուդարստեան

The article provides a detailed analysis of state historical and modern typologies basic approaches.

Keywords: Historical, state, statehood development, typology modern theories.